

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
Ո Ր Ո Շ Մ Ա Ն

«___» _____ 2020 թվական

N ___-Ն

ք. Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2000
ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 254 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2000 թվականի դեկտեմբերի 26-ի «Ծախսերը հիմնավորող փաստաթղթերի նկատմամբ ներկայացվող պահանջները սահմանելու և այդ փաստաթղթերի կազմման կարգը հաստատելու մասին» N 254 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) որոշման 2-րդ կետի «բ» ենթակետում և որոշմամբ հաստատված կարգում «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառերով,

2) որոշման 2-րդ կետում՝

ա. «գ» ենթակետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային պետական վարչությունը՝ համաձայնեցնելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարությունը» բառերով,

բ. «դ» ենթակետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով,

գ. լրացնել հետևյալ բովանդակությամբ «ե» և «զ» ենթակետեր.

«ե/ էլեկտրոնային հարկային հաշիվը համարվում է եկամուտը հիմնավորող փաստաթուղթ, եթե այն պարունակում է սույն որոշմամբ սահմանված վավերապայմանները (բացառությամբ ստորագրությունների և դրանց վերաբերող տվյալների) և հաստատված է փաստաթուղթը դուրս գրողի (լիազորված անձի), իսկ հարկ վճարողների կողմից կիրառվող հարկային հաշիվների դուրսգրման հատուկ ծրագրով (բիլինգային համակարգով) Արցախի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով դուրս գրված հարկային հաշիվների մասով՝ հարկային մարմնի էլեկտրոնային ստորագրությամբ.

զ/ էլեկտրոնային հարկային հաշիվը համարվում է ծախսը հիմնավորող փաստաթուղթ, եթե այն պարունակում է սույն որոշմամբ սահմանված վավերապայմանները (բացառությամբ ստորագրությունների և դրանց վերաբերող տվյալների) և հաստատված է փաստաթուղթը դուրս գրողի (լիազորված անձի), իսկ հարկ վճարողների կողմից կիրառվող հարկային հաշիվների դուրսգրման հատուկ ծրագրով (բիլինգային համակարգով) Արցախի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով դուրս գրված հարկային հաշիվների մասով՝ հարկային մարմնի և հարկային հաշիվն ստացողի էլեկտրոնային ստորագրություններով:»,

3) որոշմամբ հաստատված կարգի՝

ա. 1-ին կետում լրացնել հետևյալ բովանդակությամբ «ա.1» ենթակետ.

«ա.1) ճշգրտող հարկային հաշիվը.»,

բ. 1-ին կետում լրացնել հետևյալ բովանդակությամբ «բ.1» ենթակետ.

«բ.1) ճշգրտող հաշիվ-ապրանքագիրը.»,

գ. 2-րդ կետի «բ» ենթակետից հանել «՝ բացառությամբ, եթե հաշվարկային փաստաթուղթը դուրս է գրվել Հայաստանի Հանրապետության հարկ վճարողի կողմից և պարունակում է գեներացված սերիա ու համար» բառերը,

դ. 2-րդ կետի «դ» ենթակետում «ծառայությունների» բառից հետո լրացնել «(աշխատանքների)» բառը,

ե. 2-րդ կետի «ե» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ե/ ակտիվների միավորի գինը՝ դրա առանձնացումը հնարավոր լինելու դեպքում, առևտրային զեղչը՝ առկայության դեպքում (այդ թվում՝ հրապարակային առևտրային զեղչը) և ընդհանուր արժեքը կամ մատուցվող ծառայությունների (կատարվող

աշխատանքների) սակագինը, առևտրային զեղչը՝ առկայության դեպքում (այդ թվում՝ հրապարակային առևտրային զեղչը) ու հատուցման ենթակա ընդհանուր գումարը:»,

զ. 4-րդ կետի «բ» ենթակետից հանել «՝ բացառությամբ, եթե հաշվարկային փաստաթուղթը դուրս է գրվել Հայաստանի Հանրապետության հարկ վճարողի կողմից և պարունակում է գեներացված սերիա, համար» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

«Հաստատում եմ»

**ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ